ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ /01.07.2016/

Հայաստանի Հանրապետության մեծահարգ պարոն Նախագահ,
Վեհափառ տեր,
Հարգելի ներկաներ:

Սահմանադրության օրվա խորհուրդը յուրաքանչյուր երկրի ու ժողովրդի համար դրսեւորվում է հանրային համակեցության այն որակով, որն առկա է իրական կյանքում: Սահմանադրությունը՝ որպես քաղաքակիրթ համակեցության հիմնական օրենք, երաշխիքն ու միջոցն է կայուն եւ դինամիկ զարգացում ապահովելու համար: Իսկ դա հնարավոր է դառնում միայն այն դեպքում, երբ Սահմանադրության ուժով իրավունքի գերակայությունը դառնում է անձի սոցիալական վարքագծի, պետության քաղաքական ինստիտուտների քաղաքական վարքագծի, իշխանությունների հանրային վարքագծի հենքը:

Վերջինիս հասնելու համար իրավական, ժողովրդավարական պետության կայացման լուրջ ճանապարհ պետք է անցնել: Մեր երկիրն այս ուղղությամբ հիմնաքարերը դրեց Անկախության հռչակագրով, «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքով, 1995թ. հուլիսի 5-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրությամբ:

Հանրային կյանքի զարգացմանը համաքայլ սահմանադրական նոր զարգացումներ արձանագրվեցին 2005 թվականի սահմանադրական հանրաքվեով: Այդ զարգացումներն առավել ամբողջականացան ու համակարգային բնույթ ստացան 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում:

Այսօր վստահաբար կարող ենք փաստել.

1. սահմանադրական մակարդակում Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված է իրավունքի գերակայության սկզբունքը,
2. անհրաժեշտ սահմանադրական նախադրյալներ են ստեղծվել մարդու հիմնական իրավունքների անմիջական գործողությունը երաշխավորելու համար,
3. որակապես փոխվել են անմիջական ժողովրդավարության իրացման եւ քաղաքացիական հասարակության կայացման նախադրյալները,
4. ձեւավորվել է իշխանությունների բաժանման ու հավասարակշռման առավել գործուն սահմանադրական համակարգ,
5. անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ են ամրագրվել իրավական որոշակիության սկզբունքի իրացման համար,
6. սահմանադրորեն դատական իշխանության գործառութային ու կառուցակարգային անկախության որակապես նոր երաշխիքներ են ստեղծվել,
7. ձեւավորվել է անհրաժեշտ սահմանադրական միջավայր իրավական, ժողովրդավարական պետության հիմնարար չափորոշիչների իրացումը երաշխավորելու համար:

Գերագույն խնդիրն այս ամենի ապահովումն է իրական կյանքում՝ համարժեք օրենսդրական ու կառուցակարգային լուծումների, դրանցում քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավման ու հանրային կեցության որակն էապես բարեփոխելու ճանապարհով:

Սահմանադրական նոր լուծումները վճռական ոչ են ասում մեզանում արմատացած ու մեր առաջընթացի խոչընդոտ դարձած սոցիալական չարիքներին՝ իրենց բոլոր դրսեւորումների մեջ: Պետական քաղաքականության օրակարգի առաջնահերթ հարց են դարձնում քաղաքական, տնտեսական ու վարչական ներուժի սերտաճման հաղթահարումը, գործուն պայքարը կոռուպցիայի դեմ, օրենքի առջեւ բոլորի հավասարության երաշխավորումը, կառավարման թափանցիկության ապահովումը, խտրականության հաղթահարումը, մարդկանց սահմանադրական ազատությունների երաշխավորումն ու սոցիալական պաշտպանվածության անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը:

Այս ճանապարհով միայն հնարավոր կլինի, Սահմանադրության առկայությամբ հանդերձ, սահմանադրականություն երաշխավորել մեր երկրում, ունենալ սահմանադրական մշակույթի այնպիսի մակարդակ, ինչը հարիր կլինի նաեւ Սահմանադրության նախաբանում հաստատապես ամրագրված՝ անկախ պետականության կայացման մեր նախնիների սուրբ պատգամին, ինչը հանրային կյանքում այն ճանաչումն ու դերակատարությունը կունենա, ինչպիսին ունեցավ հազար տարի առաջ կերտված ու համաշխարհային համբավ ստացած մեր հոգեւոր Սահմանադրությունը:

Հարգարժան ներկաներ,

այս հիմնախնդիրների համակարգային լուծումները քննության առարկա են դարձել նաեւ օրվա խորհրդին համահունչ Ձեզ ներկայացվող իմ մենագրության մեջ, որն անվանել եմ «Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը եւ ժամանակի մարտահրավերները»՝ շարունակական դարձնելով հետազոտությունն այս ոլորտում: Առաջադրվող մոտեցումները տարիների փորձառության, համալիր գիտական հետազոտության, համեմատական սահմանադրական վերլուծության արդյունք են: Ես համարձակություն եմ ունեցել գիրքը նվիրել մեր երկրի անկախության 25-ամյակին՝ թե՛ արածի արժեվորման եւ թե՛ անելիքի որոշակիացման տեսանկյունից:

Հուսով եմ, որ այն իր կաթիլը կավելացնի մեր պետականության հետագա ամրապնդման, Հայաստանում իրավական, ժողովրդավարական պետության կայացման գործին:

Տեղեկացնեմ նաեւ, որ այս տարվա հոկտեմբերի 20-23-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի հետ գործակցաբար Երեւանում հրավիրվելու է համաեվրոպական խորհրդաժողով՝ նշված հիմնախնդիրների համալիր քննարկման, մեր կողմից առաջադրված՝ սահմանադրական մշտադիտարկման հայեցակարգի իրացումը երաշխավորելու հարցերով:

Ակնկալում եմ նաեւ Ձեր գործուն մասնակցությունն այդ քննարկումներին եւ շնորհակալություն եմ հայտնում Սահմանադրության օրվան նվիրված ընդունելությանը Ձեր մասնակցության համար: